

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/1

24 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Վարդանյանների ընտանիք» ՍՊԸ 12.09.2013 թ-ի դիմում-բողոքը « ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.08.2013 թ-ի թիվ 232784 որոշման դեմ:

«Վարդանյանների ընտանիք» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

« ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 29.08.13 թ-ի որոշմամբ, այսուհետ՝ Որոշում, իմ նկատմամբ նշանակվել է տուգանք 25.000 դրամի չափով՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» « օրենսգրքի /հետագայում՝ ՎԻՎՕ/ 169¹ հոդվածի 1-ին մասի հիմքով: Որոշումն օրինաչափ չէ և ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարդանյանների ընտանիք» ՍՊԸ-ում (հետագայում՝ Ընկերություն) իրականացված քույզեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգման արդյունքում 30.07.13 թ-ին կազմվել է թիվ 1004213 ակտը: Ընկերության կողմից ակտի վերաբերյալ ներկայացվել են առարկություններ: Ակտը կազմելիս ստուգումն իրականացնող անձանց կողմից հիմք են ընդունվել ներկայումս իրավապահ մարմիններում քննվող քրեական գործով քննիչի վկայակոչած մի շարք փաստեր, որոնք դեռևս ապացուցված չեն և չեն կարող հիմք հանդիսանալ Ընկերության նկատմամբ հարկային պարտավորություններ սահմանելու համար:

Ստուգումն իրականացրած անձանց կողմից անտեսվել է այն, որ ակտով արձանագրված ենթադրյալ խախտումներն իրականացվել են Ընկերության նախկին տնօրենի պաշտոնավարման ընթացքում՝ 2011 թ-ին, այնինչ ես Ընկերության տնօրենի պաշտոնում նշանակվել եմ 2012 թ-ի հուլիսին: Ընդ որում, քրեական գործի նյութերով քննիչի կողմից պարզված փաստերով երևում է, որ ենթադրյալ իրավախախտումը թույլ է տվել ոչ ներկայիս տնօրենը:

ՎԻՎՕ 8-րդ, 9-րդ, 22-րդ և 32-րդ հոդվածներից հետևում է, որ տույժը կարող է նշանակվել այն անձի նկատմամբ, որը թույլ է տվել խախտումը: Այնուամենայնիվ, թիվ 232784 որոշմամբ տույժը նշանակվել է իմ նկատմամբ, ինչը չի բխում օրենքի տառից և սկզբունքներից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Այսպիսով, պատասխանատվությունը օրենքի պահանջի չկատարման համար պետք է դրվի խախտումը կատարած անձի՝ տվյալ ժամանակաշրջանում Ընկերության տնօրենի պաշտոնը զբաղեցրած անձի վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՎԻՎՕ 293-րդ հոդվածով՝ խնդրում եմ բեկանել « ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 29.08.2013 թ-ի թիվ 232784 որոշումը և գործն ուղարկել նոր քննության՝ փոխարինելով վարչական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտին պատշաճ սուբյեկտով:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Վարդանյանների ընտանիք» ՍՊԸ տնօրենի և « ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ ներկայացուցչի բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող

նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի քննարկման ընթացքում պարզվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.05.2013 թ-ի թիվ 1004213 հանձնարարագրի <Վարդանյանների ընտանիք> ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 30.07.13 թ-ին կազմվել է թիվ 1004213 ակտը, որով արձանագրված խախտումների համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.08.2013 թ-ի թիվ 232784 որոշմամբ <Վարդանյանների ընտանիք> ՍՊԸ ներկայիս տնօրենը <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 25.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ վարչական պատասխանատվության ենթարկված անձ Ա.Կարախանյանը <Վարդանյանների ընտանիք> ՍՊԸ տնօրենի պաշտոնը ստանձնել է 2012 թ-ի հուլիս ամսին, այն դեպքում, երբ վերոգրյալ ստուգման ակտով պարտավորություններն արձանագրվել են 2011 թ-ին կատարված խախտումների համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. <Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները>:

Իր հերթին, <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն. <Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության. կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ. ...>:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.08.2013 թ-ի թիվ 232784 որոշումն ընդունվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի պահանջների խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.08.2013 թ-ի թիվ 232784 որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ